



ԻՐԱՎՈՒՆԿ

Rev. Père G. Kalémkarian M. chitarist ngasse
N° 4 Vienne

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓՇԱԲԹԻ ԵՒ ՇՐԱԲԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիսիոյ համար Տարեկան 12 ֆր.
» Վեցամսեայ 6 ֆր.
Արտաստանման համար (երկու քիւր մեկ
հարկով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԿԻՒՆ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎԱՌՆԱ (Պուլկարիա)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България)
Redaction du journal
„Ira vounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար հասցեալ
ներքեւի միայն կը հրատարակուին աւ-
րոյշովի կամ մասամբ:
Իրանացեան տղը 20 սանթիմ. երե-
ւելի աւելի ակգամեւոր համար 20 0/0
զեղջ կը լինի:

ԶԵՎՈՅՑ

Այս միայն 32 օր մնացած է որ
իրաւունքի ներկայ Գ. տարեւը-
լանը աւարտի. սակայն բաժնե-
գրներու մէկ կտրուոր մասը տա-
կաին գանձելի կը մնայ, որուն
պատճառաւ մենք նիւթակն դը-
ժուարութեանց կը բաղխինք:
Ուստի խախտնապիւն կը խնդրուի
մեր յարգոյ բաժանորդներէ որ
հաճին անյապաղ ներկայ տարւոյ
հայիւները մաքրել, որ իրենց հա-
մար միայն քանի մը Ֆրանգի
խնդիր է, իսկ մեզ համար անհը-
րաժեշտ եւ անխուսափելի պէտք
մըն է:

Մեր խօսքը մասնաւորելով,
Շուրի, Ռուստուգի, Պուլկարի,
Սիւլիստրէի, Պուլքէշի,
Քէտտէնէի, Գահիւրէի եւ Աղէք-
սանդիւրի այն բաժանորդաց՝ ո-
րոնք ներկայ տարւոյ հաշիւները
գեռ չեն մաքրած, կը խնդրենք
որ հաճին մեր ծանօթ գործակալ-
ներուն վճարել իրենց բաժնեգի-
ններն:

Նաեւ մեր մի քանի գործակալ-
ներէն կը խնդրուի որ իրենց քով
հաւաքուած դրամները անյապաղ
մեզ հասցնեն:

ՄԵՐ ԾՆՈՂԱՅ ՕՐԱԼԻ

(Ծանոթացուիւն 87 թիւն եւ վերջ)
Աւելի քիչեւոր է վարժարան յա-
ճախող մեր չափահաս օրորդներ.
րու թիւը: Ասոր ալ պատճառը
մէկն աւելի է:
Նախ ծնողքներէն ոմանք (չը-
սեմ շատերը) սա համոզումը ունին
թէ՝ աղջիկի մը համար աւելորդ
է երկար ստան խել մը գիտու-
թիւններով զբաղիլ, թէ անոր կը
բաւէ միայն երկու տող բան գրել,
կտրել սովորիլ եւ կամ շատ շատ
մէկ երկու ֆրանսերէն բառ գոց
ընիլ թուլակի նման: Ոմանք
ալ պատճառը իգական սեռի կազ-
մութեան փափկութեան կը վե-
րադրեն. տունին մէջ կը փակեն
աղջիկներն եւ միշտ անոր վաղահաս
ամուսնութեան վրայ խորհելով՝
զայն գաղափարի տէր էակ մը
ըզցնելէ առաջ, տունի մը տի-

կինը (հանրմը) ձեռագնի կը ջա-
նան(*): Չէ՞ որ անիկա քիչ մը ձե-
ռագործէն կը հասկնայ կամ կե-
րակուր պատրաստելու եղանակը
գիտէ, այդ միայն իրեն կը բա-
ւէ: Վերջապէս կան կարգ մալ
ծնողքներ, որոնք բոլորովին տար-
օրինակ կերպով կը խորհին: Այս
վերջինները կը կարծեն թէ, վար-
ժարանը աղջկան բարոյականը աւ-
րող, անոր անտարբերութիւնը,
անմեղութիւնը ու սրբութիւնը
պղծող վայր մ'է, թէ անիկալ հոն
վերահասու կըլլայ խել մը գաղտ
նիքներու, որոնք իր մարմինը,
միտքն ու հոգին կը թունաւորեն:

Արդ՝ վերոյիշեալ ծնողաց բո-
լորին ալ համոզումը հիմնովին սը
խալ ըլլալը յայտարարելէ յետոյ,
համառօտակի կ'յայտնենք մեր կար-
ծիքը այս մասին:

1. Շատ սխալ է ըմբռնել թէ՝
իգական սեռի համար երկրորդա-
կան կամ երրորդական տեղ մը կը
բռնէ ուսումը ու գիտութիւնը:

Ի նկատի ունենալով որ տղայ
մը մինչեւ իր չափահաս տարիքը
հօրմէն աւելի մօրը հետ շփոզու-
թիւն ունի, թէ տղան ընտանե-
կան դաստիարակութիւն պիտի

(*) Իրենց գաւկիս ֆիզիքականով ըզ
բաղող ծնողք ինչո՞ւ արդեօք չեն ու-
զեր նկատողութեան առնել քան մը,
որ շատ աւելի վնասաբեր, քանզի կամ
աւելիք կրնայ համարուիլ քան մտա-
ւորական աշխատութիւնը. բան մը որ
դժբաղդաբար մինչեւ այսօր մեր մէջ
գոյութիւն ունենալէ չէ դադարած: Այո՞,
մեր ծնողներէն ոմանք գեռ ինչո՞ւ ետ
չեն կենար անչափահաս աղջիկներն ա-
մուսնացնելէ: Երբ անոր ֆիզիքականը
չի ներքէր ուսման հետեւիլ, ուրեմն ինչ
պէ՞ս կրնայ ներքէլ ամուսնանալու:

Աւելորդ կը սեպեմ այս խիստ փա-
փուկ եւ կարեւոր կէտին վրայ երկա-
րօքն խօսել, ալ միայն կը շատանամ
զգացնել այդ գաւակարգի ծնողաց որ,
իրենց գաւկի ֆիզիքականը կատարեալ
հասունութեան մը մէջ գտնուելէ առաջ
կամ անոր ամեն մէկ գրութիւնները
եւ գործարանները իրենց վերջնական
զարգացումը ստանալէ առաջ (ինչ որ
հազիւ 20-22 տարեկանի մէջ կարելի
կըլլայ) երբ կեննեն իրենց գաւկին ա-
մուսնութիւնը կանխահաս կերպով վըճ
եռել. խիստ կը մեղանջնի, իրենց գաւ-
կին բազմաթիւ եւ վաղահաս անտարբե-
րութեամբ եւ մինչեւ իսկ անոր ժամ
առաջ գերեզման մանեւորն պատճառ կը
դառնան:

տղորի աւելի մօրմէն քան թէ հօր-
մէն, թէ քիչ շատ դաստիարակ-
եալ մայր մը՝ մինչեւ որ իր զաւա-
կը վարժարանի համար պատրաս-
տէ, անոր մատղաշ ուղեղին վրայ
մեծ տպաւորութիւն կրնայ ներ-
գործել իր խրատներով, յորդոր-
ներով, ըրած գիտական դիտողու-
թիւններով եւ դեռ շատ մը բանե-
րով, թէ ատանկ մայր մը դաս-
տիարակին օժանդակ մը ըլլալէ
աւելի, անոր աշխատութիւնը յոյժ
թեթեւցնող եւ թիրեւս ինքն ալ
անոր չափ օգտակար եղող մէկը
կը ներկայանայ. կը շնչտենք թէ՝
մեր օրիորդներուն պէտքերուն մէջ
առաջնակարգ տեղ մը գրաւել
հարկ է ուսումը ու գիտութիւնը:
Դեռ մէկ կողմ կը թողունք այն
համոզումը թէ՝ ամեն կին պար-
տի իբր այր մարդ համահասար
իրաւունք վայելիլ առեւտրական,
քաղաքական, գիտական խըն-
դիրներու միջամտելու մասին:

2. Ո՞վ կրնէ թէ իգական սե-
ռի կազմութեան փափկութիւնը
արգելք է անոր մտաւորականին
զարգացման: Չէ՞ որ գիտականա-
պէս հաստատուած է թէ, մար-
դուս ֆիզիքականը ու մտաւորա-
կանը զուգընթաց կերպով ընթա-
նալ ու զարգանալ անհրաժեշտ է,
թէ անոնցմէ միայն մէկին կամ
միւսին բարգաւաճումը ու է դուզ-
նաքան օգուտ չի կրնար ընծա-
յիլ մեզի: Ի՞նչ օգուտ կսպասուի
այն հսկայ եւ վիթխարի կազմու-
թենէն, որուն մտաւորականը ա-
նասնական թմրութեան մէջ
կը գտնուի: Ուրեմն շատ իրա-
ւացի կերպով կրնէ առածք «ա-
ռողջ միտք յառողջ մարմին. եւ
փոխադարձաբար»:

3. Չի գիտցուիր ի՞նչ ըսել այն
որոտակարգ ենթադրութեան, որով
վարժարանը իգական սեռի բարո-
յականութեան իբր ապակնիչ
կուզուի նկատուիլ: Ի՞նչ, միթէ
այսպէս խորհող ծնողքները կը
կարծեն որ շատ աւելի ուժով
բարոյականի ախլ մնան իրենց
աղջիկները, երբ տունին տնկիւնը
նստելով երկու բարձիկներու մէջ
տեղ մեծնան:

Երբ տղայ մը գրել, կարդալու
չաւղին մէջ կը մտնէ, ալ իրեն հա-
մար անխուսափելի կը դառնայ
մտածելու եւ երեւակայիլու պէտքը:
Տարբեր բան է սակայն երբ ա-

նիկայ մարդէ հեռու, ակումբներէ
հեռու, սենեակներու մէջ միայն,
ակ տնասնական կեանք մը կը վա-
րէ:

Ահա՛ ի՞նչ զօրաւոր պատճառ-
ներով, մենք ծնողքս ուղղելով մեր
սխալը, ջանալու ենք որպէս զի
մեր զաւակները (մանչ, աղջիկ ան-
խտիր) երթան չարունակել իրենց
վարժարանը այնքան ատեն, որ-
քան որ պարագաները կը թուլատ-
րեն:

Շապուռն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բարիկ 15/27 նոյ. 99

Հայերէն ժողովրդական երգերը
Երգիչ Պ. Լեւոն Եղիապարեանը
ձեռնարկած է Պարիզի մէջ հրա-
տարակել հայերէն բոլոր «Ժողովր-
դական երգերու հաւաքածոյ մը:
Տպագրութիւնը յանձն առած է
ամենաբեւեռի տպագրիչ՝ Էնօք —
որ միայն ամենայայտնի երգա-
հաններու գործերն տպագրել յան-
ձրն կարեն — իսկ տպագրութեան
ծախքը՝ որ շատ մեծ պիտի լինի,
յանձն առած է մեր հայ ազգային.
ներէն եւ իր առատաձեռնութեամբ
յայտնի Պ. Առաքել Ծատուրեանը:
Մենք պէտք չունինք շնչտելու այդ
հրատարակութեան օգտակարու-
թեան վրայ. ամեն ոք կըզգայ թէ
որչափ մեծ պիտի լինի այդպիսի
հրատարակութեան մը բարոյական
ազդեցութիւնն ու շահը:

Հայերէն բոլոր եղանակները ձայ-
նագրուած են եւ ներդաշնակուած
Ռէյնէի, Վէնսան տ'ինտի, Պուր-
կո-Տիւքատրէի, Շարլ Պուտի,
Մէքքէրլինի, Ժորժ Մարթի,
կադաչէնքօի, Վիլհիսքի նման Ֆը-
րանսացի եւ Ռուս երգահաններէ,
որոնք այսօր միւզիքական աշխար-
հին փառքերն են:

Երգերու խօսքերը թարգման-
ուած են Ֆրանսերէնի, իտալերէ-
նի, Անգլիերէնի, Ֆերմաներէնի եւ
այսպէս յարմարցուած են որ այդ
ընգունները ներկայացնող ազգերու
անհատներն պիտի կարող լինին,
հայերէն եղանակով հայերէն թարգ-
մանուած բանաստեղծութիւն մը
երգել:

Իմ այս թղթակցութիւնը ձեզ
հասած ժամանակ արդէն առաջին

գիրքը լոյս կը տեսնէ որուն արգէն փորձերը երէք օր առաջ տեսանք: Ամբողջ գործը պիտի բաղկանայ 6 գրքովներէ, որոնք երկու ամիսը անգամ մը պիտի հրատարակուին: Գնել փափաքողները կարող են գիմել Պ. Լեւոն Եղիաշարեանի ինքնատիպ, 18 rue de douai:

Մենք ուրախ ենք այդ հրատարակութեան լոյս տեսնելուն վրայ, վասնզի եւրոպական հասարակութիւնը, թղթատուով այդ ընդարձակ հրատարակութիւնը, պիտի կարենայ գնահատել հայուն ժողովրդական արուեստն որ այնքան սեփական և այնքան արտայայտելի է իր պարզութեան մէջ:

Պ. Եղիաշարեան ուրիշ շատ մը ազգագրութեան գաղափարներ ունի, զորս պիտի գործադրէ, մենք բոլորով սրտիւ յաջողութիւն կը մտկայենք թէ իր ապագայ ձեռնարկներուն և թէ ներկայ հրատարակութեան համար որ արդէն լմացած բան մ'է:

Ուսանողաց ընդհ. միութիւնը

Հասարակագիտութեան նախագահը, միեկնաբանութեան և զանազան ֆաբրիկէներու շատ մը բրոֆէսէօրներ երէկ ներկայ գտնուեցան Պարիզի Ուսանողաց Ընդհ. Միութեան նոր կեդրոնատեղւոյն բացման հանգիստն որ տեղի ունեցաւ Սօրպոնի մեծ ամփոթատրոնին մէջ:

Մօտ տասներկու հազար հոգիներ հաւաքուած էին Սօրպոնի մէջ—մեծ ամփոթատրոնը արդէն 12 հազար հոգի կը պարունակէ—ամենքն ալ ուսումնական և գեղարուեստական դասակարգին պատկանողներ, հանդէսի ժամանակ լսուեցան Պարիզի հռչակաւոր դերասաններն և կառոյց Ռեփրիշուիքէն նուագախումբը որ Ֆրանսայի նուագական պարծանքն է: Ամբոթատրոնին կեդրոնատեղին որ միայն Ուս. Ընդհ. Միութեան անդամներուն յատկացուած էր, ազմկալից և փութորկալից «օպերիօն»ներ ըրաւ արդիւտներուն:

Ուսանողական Ընդհ. Միութիւնը, Ուսանողական թաղին ամենահին հաստատութիւններէ մին է որ կիսապաշտօնական ձեւ մը ունի. արդէն նա կառավարութեանէն ճանչցուած է իրեն հասարակագիտութեան օգտակար մի հաստատութիւն, — ինչնեք անցողակի որ՝ երբ ու է հաստատութիւն մը կառավարութենէն կը ճանչցուի իրեն օգտակար հասարակութիւն կառավարութենէն կը ըստանայ տարեկան ուրիշ գումար մը ըստ իր կարեւորութեան:

Պարիզի Ուս. Ընդհ. Միութեան հիմնադիրն եղեր է Պ. Լավիս՝ ուսուցիչ պատմութեան ի Սօրպոն, անգամ Ֆրանսական կաճախին, և այսօր ալ անոր պաշտպաններէն ու պատուոյ նախագահներէն մին է: Պ. Լավիսի ծրագրին համեմատ, Ուսանողական Միութիւնները պիտի միացնէր վարժարաններու ա-

շակերտներն երբ նոքա լիսէներէ կամ գոլէֆներէ դուրս գային, այս ծրագրերը յաջողեցաւ գաւառներու մէջ, ուր ուսանողներն խոյս կուտան Ընդհ. Միութիւններէ: Պարիզի մէջ շնորհիւ բազմաթիւ Ուսանողներու որք կը գտնուին այլ և այլ ֆաբրիկէներու մէջ, բարձրագոյն պետական կամ մասնաւոր դպրոցներու մէջ և շնորհիւ բարաստիճան անձնաւորութեանց հովանաւորութեան, Ուս. Ընդհ. Միութիւնը կարողացաւ տարածում գտնել և յաջողի:

Այս Միութեան կրնան մասնակցել նաեւ օտար ուսանողները, բայց զիւանին և խորհրդին անգամ ինքնու համար Ֆրանսացի լինելու է:

Երէկուան Սօրպոնի հանգէսէն յետոյ, Գաութիէ Լաթէնի մէջ ցոյցեր տեղի ունեցան, որոնք կազմուած էին — որչափ որ մենք կարողացանք աչքով տեսնել ու հաստատել — ոչ-ուսանողներէ, այսինքն կուսակցական խմբերէ, ու մանք կը պոռային «կեցցէ՛ լուսւլ», ուսմք «անկցի Լուսւլ» ու մանք կուսակցական այլ և այլ աղաղակներ կը բարձրացնէին: Ցոյցերը տեւեցին — երկուրեւ ժամը 5էն սկսեալ — մինչեւ առաւօտեան ժամը 4-ը, Եղան մի քանի ժամանակաւոր ձերբակալութիւններ:

Անգլիական կայսրութիւնը

Անգլիացիք ճշմարտագէտ խօսելով կշտանալ ըսուած բանը չգիտեն: Կաշխատին աշխարհի ամեն կողմերն իրենց գաղթական կայսրութիւնը տարածելու: Այսուհանդերձ եթէ ակնարկ մը նետենք իրենց կայսրութեան վրայ պիտի տեսնենք թէ իրենց գաղութները շատ աւելի ընդարձակ են քան միւս ազգացն: Այս կայսրութիւնը կը տարածուի բոլոր ցեղերէ եւ երկրագնդի ամեն կէտերուն վրայ: Միծն Բրիտանիոյ և Իռլանտիոյ Միացեալ թագաւորութեանց տարածութիւնն է 315,000 քառակուսի քիլոմէթր 40 միլիոն բնակչօք: Նոր աշխարհահամարի մը համեմատ Անգլիացիք Ասիոյ մէջ 5,823,000 քառ. քիլոմ. երկիր ունին և 308,238,000 բնակիչ — միայն Անգլիական Հնդկաստանի համար, 4,630,000 քառ. քիլ. 292 միլիոն բնակչօք: Ամերիկայի մէջ Անգլիա ունի 9,494,000 քառ. քիլ. և 7 միլիոնէ աւելի բնակիչ: Ովկէանիոյ մէջ 8,456,000 քառ. քիլ. և 5 միլիոնէ աւելի բնակիչ: Այնպէս որ բոլոր այս թիւերը գումարելով կուենանք հետեւեալ ստորագրելի թիւն. 30,998,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն մը 406,300,000 բնակչօք: Սակայն Անգլիա այս արդէն շատ պատկառելի թուով չգոհանար և միշտ պատրաստ է կու տալու ինչ որ իր մօտը կամ ձեռքի տակ կ'գըտնուի: Եւ այն տեղերն որ տեղւոյն զբոլորեան և կամ բնակչաց վա-

խէն չկարողացաւ աշխարհակալութիւններ ձեռք բերել, կարողացաւ գոնէ ռազմագիտական կէտերուն տիրել ինչպէս Մալթա, Կիպրոս, Ճիպրալթար:

Ա. Սեւի եւ Մ. Դաւիթ-Բեկ

ՄԱՐԱԶԱՆԻՑ ՅՈՒՈՏ ԲԱՇԱ

Իրաւունքի 89 թիւին մէջ վերոյիշեալին նկատմամբ տրուած լուրին հետեւեալն օր, այսօր աւելորդ չեմ համարիր մէկ քանի ծանօթութիւններով զինքը ճանչցնել ընթերցողաց:

Ֆուլատ փաշա իր զինուորական ուսումը ու կրթութիւնը ստացած է Գերմանիա: Բայց հակառակ իր ունեցած իրական արժանիքին, թէ բնիկ և թէ օտար բարձր շրջանակներու մէջ իբրեւ հմուտ և ճարտար ռազմագէտ վայելած համբաւին, իր ուղղամիտ ըլլալը ու ազատախոհութիւնը զինքը անհաճոյ ըրած է Երլաւը, որուն պատճառաւ գրեթէ միշտ հեռու պահուած է պաշտօններէ:

Այս պարագաներէն ինչպէս կերեւայ Ֆուլատ փաշա թիւրք բարձրաստիճաններու մէջ եղական դիպ մըն է և բացառութիւն մը ամեն կերպով:

Երբ այսօր «Իրաւունք»ի մէջ քանի մը տողեր կը նուիրենք Ֆուլատ փաշայի, մեր Պոլսոյ ազգակիցները որոնք Գաութ-Գիւլ և Իսկիւտար կը բնակին, առիթ ունեցած են 96ի ջարդին շնորհապարտ մնալ անոր, որուն շնորհիւ առանց բացառութեան այդ արուարձաններու հայերը ազատած են ընդհանուր խօգժութենէն իրենց բաժինը ունենալէ, հակառակ Սուլթանի կամքին: Մանաւանդ Գաութ-Գիւլ հայ հարուստ դասակարգին մէկ կարեւոր մասին բնակավայրը ըլլալով աւելի ախորժաբեր էր թուրք խուժանին համար:

Ֆուլատ փաշա ջարդի ատեն փութացած է այն երկու բազմամարդ և բազմահայ արուարձաններու պահականոցները, պաշտօնական համազգեստով անձամբ երթալ և խստիւ պատուիրել ամեն ոստիկանապետներու և ոստիկաններու, որ և ոչ մէկ պարագայի մէջ և ոչ մէկի մը հրամանով ալ չը դպչին քրիստոնէի մը մասնաւորագէտ հայուն մը: Հակառակ պարագային տեղական թաղային ոստիկանները պատառնաւ նախաձեռնելով, սպառնացած է, իր պատուէրին և հրամանին դէմ չարժող թէ ոստիկանապետ և թէ ոստիկան ինքը իր ձեռքովը սպաննել: Եւ ջարդին տեւողութեան միջոցին գիշեր ցերեկ Գաութ-Գիւլի և Իսկիւտարի ամեն կողմերը շարունակ պտտելով անձամբ ալ հսկած է ոստիկանութեան վրայ: և այսպէսով կրցած է ինքն ազատել բազմաթիւ

հայ ընտանիքներ: Վերագրեալ պարագան որ մեր վերջի մէկ քանի տարուան Պոլսոյ ազգային կեանքին հետ առնչութիւն մը ունի, պարզելէ վերջ մէջ տեղ կը բերենք նաեւ Ֆուլատ փաշայի մեղի ծանօթ մէկ քանի արարքները որոնք ոչ նուազ պատիւ կը բերեն իրեն:

Ֆուլատ փաշա, Տաճկաստանի արդի կացութենէն զգածեալ, քանի անգամներ կ'օր յիշատակուրերով և թուրք շրջանակի մէջ նմանը գրեթէ չտեսնուած, ինչ Երլաւըի մէջ երբեք չըլտուած անկեղծ համարձակութեամբ մը թուրք նախարարներուն և պաշտօնեաներուն ամեն կերպ զեղծում: Ներուն շնորհիւ երկրին անկամ վիճակի մէջ ըլլալը որոշ կերպով պարզած է Սուլթանին:

Եւ այս առիթով մասնաւորագէտ ընտանիքներէ և կառավարութեան ընթացքը հանդէպ քրիստոնէայ հպատակ տարրին, մասնաւոր հայոց համար: Եւ այս առիթով թէ ներկայի հայկական խլրտումները ոչ թէ ապստամբութիւն, այլ գործնական և արդարացի բողոք մը պէտք է նկատուի, «երկրին յոռի վարչութեան և զեղծ պաշտօնեաներու դէմ», զորս Ֆուլատ փաշա մասնաւոր կընէ իրեն մահացու վերքեր երկրին համար:

(Շարունակելի)

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Սօֆիա, 23 նոյեմ. 99
Կան պարագաներ ուր հարկ է լուր, բայց կան պարագաներ ալ որ, անպատճառ պէտք է գրել կամ ըսել: Խոշորը հանրային ըլլալուն, նամանաւոր աններկի զեղծում մը գործուած ըլլալով լուրը մեծագոյն յանցանքն է. և գիտնալով լուրն ալ մեղսակցութիւն կը նշանակէ տրամաբանօրէն:

Պ. քաղաքի մէջ, մօտ 20,000 ֆրանք արժողութեամբ հայ ֆերիաշնակցութեան 28 սնտուկ գոյքերու անհետացումը, իր տեսակին մէջ նշանակելի բան մըն է. կամ գողցուած է կամ վստահութիւն մը չարաչար գործածուած է, ինչ որ է եղեր է, անհետացեր է: Պէտք է յայտնել, հասարակութիւնը պէտք է իմանայ, պատճառները պէտք է փնտռուին, գտնուին և ի հարկին արդարութեան ձեռքը յանձնուին: «Իրաւունք», ինչ որ լրագրի մը անհրաժեշտ, անխուսափելի պարտքն է, համարձակեցաւ հրապարակել խնդիրը, մասնաւոր ընելով մի քանի կէտեր պաշտօնեան կեդրոն միութեան իրաւասութեան և պարտականութեան մասին՝ վերաբերմամբ այդ խնդրոյն:

Առ այս «Շարժում» թերթը կամ անոր խմբագիրը մի ինչ որ վարդօ և ուրիշ Մուրադ-Մով-

բառեր, ոգի ի բուն շարժումներ ըրին, ցնցուցեցան, իրենց շիջերուն զպաւ, և փոխանակ պատուաւո. րապէս հերքելու կամ ընդունելու տխուր իրականութիւնը, սկսան ամեն կողմ լուսանքներ և հայ- խորութիւններ սրսկել. . .

Բայց մի քիչ շունչ առէք, պա- րոններ. մեր յեղափոխական կազ- մակերպութիւնք և մասնաւոր Դաշ- նակցութիւնը որ աւելի ժողովրդա- կան եղաւ, որ ժողովուրդէն—Ազ- գէն ծնաւ, ազգային է և հետեւա- թար ազգին կը վերաբերի և անոր հիմնականը, որ ժողովուրդին, աղքատին արին քրտինքովը գո- յացած է և հոն որբեւարին լու- լան ալ իր բաժինը ունի կը կար ձեռք: Ամեն ոք որ այդ հասարա- կութեան կը վերաբերի որ հայու սիրտ և արին կը կրէ իր մէջ իրաւունք մը ունի ձայն բարձրա- յնելու և բողոք բառնալու և ի հարկին Դաշնակցութեան ձեռնհաս մարմնոյն խորին ուշադրութիւնն հրաւիրելու, երբ այսպիսի անո- րակերի գեղծում մը կը կատարուի անուշտ, հակառակ Դաշնակցու- թեան կամքին:

Մենք սպասելով որ «Դրօշակ» պատմագիրները, խնդիրը իր լուրջ հանդամանքովը նկատի առնէ եւ վրդոված միտքերը հանդարտե- ցնելու համար կարելիութեան սահ մանին մէջ իր տեսութիւնները և տեղեկութիւնները պարզէ և հարկ եղածը տնօրինէ. կըսենք Շար- ժումի և իր զեկափայտներուն. ա՛լ հերթը պարտենք, ա՛լ հասկցունե- ցու՛ր դուք ձեր ընթացքով աւելի ծղո՛ւմ տուիք հայ հասարակու- թեան համոզում գոյացնել իրողու- թեան ճշմարիտ ըլլալուն. ինչո՛ւ կը փրփրէ և ինքզինքը կորսնցնո.

ղի մը պէս կը բարբառնէք հանդէպ յայտնուած ճշմարտութեան մը, ի զոր են ձեր ջանքերը, քանի որ կը խօսիք առանց փաստի. և թէ կարող էք հերքել քերական- նապէս, ապա թէ ոչ զայն հաս- տատելու քաջութիւնը և անկեղ- ծութիւնը ունեցէք: Մի՛ պրպտէք բառարանները գտնելու համար բառեր՝ եղած շահատակութիւնը դիմակաղերձ ընողին մրոտել ջա- նալու: «Չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի»: Եթէ անմեղ էք դուք վերցուցէք առաջին քարը քարկո- ծելու. եթէ չէ աշխատէք, անշուշտ շահ մը ունիք զայն ծածկելուն մէջ, կամ մեղսակից էք և կամ բուն մեղապարտն էք:

Շարունակեցէք դուք ձեր փշոտ և փշոտ ուղին. հասարակութիւ- նը գիտէ լաւին լաւ ըսել՝ փատին փատ:

Դարսանաղի

ԼՐԱՔԱՂ

— — —

Ինչպէս մեր նախորդ թուով հաղորդած էինք, Մուշէն, Բա- ղէշէն, Կարինէն, Ալաշկերտէն Պատրիարքարան հասած նամակ- ներ այդ գաւառներու կացու- թիւնը շատ դառն կերպով կը նը- կարագրեն: Անցեալ ուրբաթ ա- լուր Խառն ժողովը այդ գրու- թիւնները նկատողութեան առաւ ու ընդ երկար խորհրդակցելէ վերջ որոշեց յաջորդ նիստի թողուլ հարկ եղած տնօրինութիւնը. որովհետեւ նոյն օրը Խառն ժողովը մեծա- մասնութիւն չէր կազմէր. Յարու- թիւն փաշա եւս իր բացակայու- թեամբ կը փայլէր, քանզի նա ա՛լ իր դերը կատարած էր. Սուլթա-

նին պատուէրին համեմատ Ազգ- վարչութեան կողմէ յանուն հայ ազգին ստրկական զգացումներ յայտնող պաշտօնագիր մը Սուլ- թանին ոտքերուն առջեւ դնել յա- ջողած էր Օրմանեանի ձեռքով:

— Պոյոյ հանրածանօթ յոյն վաճառականներէն խորհովէրի էֆ. վերջերս մեռած ըլլալով, իր ժա- ռանգորդաց կողմէ 40 օսմ. ոսկի նուիրուած է Գառը-գիւղի Ս. Թագաւոր եկեղեցւոյն: Յոյն վա- ճառականի մը այս գովելի նուէրը կամ կտակը հայ եկեղեցւոյն ճշ- մարիտ հակապատկեր մըն է մե- ծահարուստ Պալեան Սարգիս պե- յի անկտակ մեռնելուն:

— Սօֆիայի Տ. Արիստակէս քա- հանայ Ֆէպեան նամակ ուղղած ըլլալով Պատրիարքին՝ խնդրած էր որ արտօնէ զինքը Մարսիլիա երթալ և հոն քահանայագործել: Ի պատասխանի այդ խնդրանքին Պատրիարքը յանձնարարած է յիշ- եալ քահանային՝ որ իր խնդիրը Եւրոպայի Հայոց հոգեւոր հո- վի Խիթիւճեան սրբազանին ներ- կայացնէ:

— Պատրիարքարանի Խառն Ժո- ղովը որոշած է որ գաւառաց ա- ռաշնորդական վիճակները երկար տարիներ առանց առաջնորդի կամ լոկ տեղապահով մը չի մնան. այլ երկու տարին լրանալէն անմիջա- պէս վերջ առաջնորդական ընտ- րութիւն կատարելու հրահանգ տրուի:

— Նպաստից Թանձնաժողովը ո- ղոյած է մի քանի աղքատ գաւառ- ներու կարօտելոց բաշխելու հա- մար զրկուելիք նպաստի գումար- ները դրամագրուի բռնել և աշ- խատոշքեալ փոխարէն դրամ վը- ճարելու գրութիւնը գործադրել տալ:

Մայրս դարձեալ ժպտեցաւ ու ըսաւ. — Կը յիշես, վառեակ, ի՞նչպէս այն գարուն թիւրքերը սպաննեցին Սթոյ- քօն. — Կէ՛զ Սթոյքօ— ըսաւ մայրս ու հառաջէր:

Նէտա, նստած տեղէն ելնելով մեր քով եկաւ ու հարցոյց մօրս. «պատմէ մեղի հօրաքոյր, ինչո՞ւ սպաննեցին Սթոյքօն, Նէտիլքօի մարգալտներն քով. ուռնիք մը կախած էին ես տե- սայ»:

— Մտիկ ըրէք, աղաներս, ինչո՞ւ սպաննեցին. նստէ Նէտա ու լսէ. բո- լոր գիտցածս պիտի պատմեմ ձեզի: Մայրս սկսաւ պատմել այսպէս. —

«Սթոյքօ, բարի, խելացի, եռան- ղոտ ու աշխատասէր երիտասարդ մըն էր. բայց շատ ցատկոտ էր լուսահոգին. — թող Աստուած ներէ յանցանքներին: Եթէ Սթոյքօ մէկին ըսէր թէ այս այս- պէս է, իսկ այն այնպէս, խօսքերը պարսկա խելը կը վատնէիր, եթէ ի- րեն ապացուցանելու ելնէիր թէ ա- նանկ չէ. ամբողջ աշխարհ չպիտի կըր- նար ապացուցանել թէ անանկ չէ: Իհե- յերբ եւ մեծերը շատ անգամ կըսէին անոր. «Մի՛ խնար թիւրքերին հետ, որովհետեւ անոնց ձեռքերը երկար են»:

— Եթէ երկար են, թող իրենց չեղքը հասնին: Եթէ թիւրք են, երկու գըլ- խով չեն ետ, անոնք ինծի պէս մօր- մէ ծնած են» կը պատասխանէր Սթոյ- քօ: Իսկ խելացի մարդիկ կըսէին. «մը-

Այս օգտաշատ գրութիւնը գոր- ծադրելու համար քանի մը գա- լաւներու մէջ յարմար և վստա- հելի անձնաւորութիւններ ներկա- յացնել յանձնարարած է. և այդ նպատակաւ ալ Սթէրգի տեղապա- հին 60 ոսկի զրկած է իբր գրա- մագրուի:

— Վանայ առաջնորդարանը Շա- տախու գիւղօրէից համար Պատ- ըրարքարանէն նպաստ խնդրած ըլլալով, Թանձնաժողովը ի չգոյե պատրաստ դրամի որոշած է գրել վան, որպէս զի անցեալ շաբթու- հոն զրկուած 250 ոսկիէն մաս մը Շատախու յատկացնեն:

— Թանձնաժողովը անցեալ շաբ- թու 50 ոսկի յանձնեց Արարկիւրի առաջնորդին, որ անձամբ տեղե- կութիւններ ներկայացուց վիճա- կին կարստելոց և ոչբոց մասին:

— Մշոյ առաջնոր. տեղապահն Բարգէն վաչդ. մանրամասն տե- ղեկագրով մը տեղացւոց երաշտու- թեան պատճառաւ կրած տառա- պանքն և շատ մը գիւղացւոց դէ- պի Տիգրանակերտ և ուրիշ քա- ղաքներ գաղթելն հաղորդած ըլ- լալով, Թանձնաժողովը որոշեց 400 ոսկի զրկել:

— Հայ հռոմէականաց Պատրի- արքը, Հայր Շարմէթանին մաս- նաւոր նամակ մը գրելով, իզմիրի երկրաշարժին պատճառաւ կործա- նած կաթոլիկ եկեղեցիին և Մը- խիթարեան Միաբանութեան հաս- տատութեանց վերաշինութեանը համար օգնութիւն խնդրած է, յայտնելով որ կարելի չէ ու եւ քան մը սպասել Օսմ. կառավա- րութեան կողմէ կազմուած նը- պաստամատոյց յանձնաժողովէն:

— «Արձագանք»ի խմբագիրնե- րէն Պ. Հախումեանց Բարիզ գա- ցած է՝ ուր մտադիր է քաղաքա- կան, գրական և արուեստական թերթ մը հիմնել հայերէն լեզ- ուով:

տիկ ըրէ, Սթոյքօ, մենք ձեր մարդ ենք ու կիանքը քեզնէ լաւ կը ճանչ- նանք: Թիւրքի հետ կատակ չըլլար: Մեզի հաճո՞յ է կը կարծես, երբ միզ կը չարչարեն ու կը հայհոյեն. բայց մենք կրնա՞նք կոտիլ զօրաւորների հետ: «Կուտպուլիսի հետ մի կոտիլ եւ եղ- ջիւրաւորի հետ մի ծեծկուիր» կ'սեն ձերերը, կ'երեւի որ այսպէս գրուած է մեզ երկինք: Ի՞նչ ալ մեզի պէս ապ- րէ, որովհետեւ «այն ոչխարը որ հօտէն կը բաժնուի գայլին կեր կըլլայ»: Մը- տիկ ըրէ ձերերուն ըսածները ու բա- րութիւն կը գտնեն, ձերերը երբէք չեն խաբուիր»: — Մի հարցներ ձերին այլ հարցուր մէջ մը քաջովին» կըսէր Սթոյ- քօ եւ ուրիշների խորհուրդները բնաւ չէին օգնէր անոր: — հաստագրուի էր: Տարի ու կէս առաջ մեր դեղը եկան Քոնստանդնուլ ու քանի մը հոգի անոր տունը իջեւանեցան գիշերելու: Սթոյ- քօ եւ պատաւ Ձվիտա (այս էր իր մօ- րը անունը) կը պատրաստեն ընթրիքը ու կը կանչեն անկող հիւրերը որ բար- ջաւիշ ըլլան ուտեն: Սեղանի վրայ դրուած էին եփած հաւկիթ, բլիւռ, մածուր պանիր ու կարկանդակ ընկու- ղով:

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (4)

ՆԵՏԱ

(ՄԱՍԻՍ ՊԱՏՄԱԾԸ)

Ձեզունը պահուրեցանք, մայրիկը և Նէտա անկիւն մը նստած կը լսէ- թն. իսկ ես մեքթ մէկին քով կերթա- լի, մերթ մի սին: Երկար տանն այս- պէս նստանք լոկ մնչիկ. ալ վերջա- պէս մայրս ձեռքէս բռնեց, դէպի ինքն քաշեց: Գլուխս կուրծքին դրաւ ու վստաւ ձեռքով մազերս շոյել: Նէտա կը նստէր ծիւնիլոյզին քով, գլուխը թնին կը թնցուցած էր ու խոր մտա- ծառնի մէջ ընկղմած կ'երեւար: Ամեն ան լուռ էր. բան մը չէր լսուէր. մի- այն հովը տանիքի տակի ծակերէն չնոր կը խուժէր ու ձիւն կը բերէր մե- զի եւ մորս քովը կը կծկուէր, քիթս կը պոկէր եւ սիրտս կը սեղմուէր կուրծքի մէջ. կուզէի քիչ մը խաղալ կուզէի վաղիկը ու գլուխը: — Տղա- լութիւն: Ձեզունը մենք ունէինք ըն- կուլ կապին, խնձոր ու սոխ: Նայե- ցայ նայեցայ, լոնցի ու վերջապէս ը- ւի մօրս:

— Մայրիկ, ընկոյզ առնեմ ուտեմ: — Մի՛, զաւակըս ըսաւ թիւրքերը խորած առնեմ կը լսեն ու կը սպան-

նեն քեզ: Եւ եթէ քեզ ստնեն տանին հետերին, ես անգուակ կը մնամ. եւ դուն անմայր. թիւրքերը գէշ մարդեր են, սիրելի զաւակս:

— Բայց ինչո՞ւ պիտի առնեն զիս մայրիկ: Եւ եթէ առնեն, կը մեռնեն զիս մայրիկ, հարցուցի ես:

— Թէ որ առնեն քեզ, կը մեռնեն զաւակս ըսաւ մայրիկը:

— Բայց ի՞նչպէս պիտի սպաննեն, մայ- րիկ: Եւ եթէ զիս սպաննել ուզեն, հայրիկի ձեռքը անոր ձեռքէն տկար չէ. հայրս մահակով անանկ ծծմ մը կը քաշէ անոնց որ իւնց ոսկրներն ան- գամ չեն կրնար ժողվել. կարծէ է հայ ըրս մայրիկ:

— Ձէ, զաւակս, չէ, հայրդ կարծէ է բայց առանձին, իսկ թիւրքերը շատ- ւոր են: Ի՞նչ կրնայ ընել անոնց, երբ անոնք թագաւորի զօրք են եւ հրա- ցան ու ատրճանակ ունին: Հայրդ չի կրնար թիւրքերի հետ կռուել, որով, հետեւ անոնք թիւրք են, իսկ նա Պուլկար:

— Բայց ինչո՞ւ թիւրքերը կարող են պուլկարները սպաննել, իո՞ր Պուլկար- ները չեն կարող թիւրքերը սպաննել:

— Ինչո՞ւ որ թիւրքերը քաջ են ու մենք վախկոտ հաւել, ըսաւ մայրս ու արիւր ծպտ մը նկարուցեցաւ շրթունք ներքին վրայ:

— Այլ ըսէ ինծի, մայրիկ. թիւրքերը ինչպէս կը սպաննեն մարդերը, հար- ցուցի:

ԹԻՒՐԵԻԱ ՆԱԿԱՏԻՍԱԹԸ

Սթանպոլտան 28 թարիխի պիր թէյէկրաֆա պինաէն, ինկիլիզ սէֆարէթհանէսինէ հիւսնիւ թէյ-վէտճուհ պէյան իտէն՝ էվվէճէ եազմըջ օլտըղըմըզ արիզէյի իմ-զալամըջ օլմալարընտան նաչի իւշ քիշի տահա տէրտէսթ օլընմըջար, պունյարըն իքէսի խարիճիյէ նէ-զարէթի մէմուրլարընտան ըմըջ :

—Պասրատան վիրուտ իտէն եէ-նի պիր հաչաաիւ Միւնթէֆիգ սանճալընտ 15000 արապ ըս-եան իթմիշ օլտըղընը պիրլարմիշ տիր :

—Ալմանիւ խարիճիյէ նագրըր գօնթ Պիւլօֆա Սուլթան Մէճի-տիյէ մուրասսա նիշանը իհտա իթմիշ տիր :

—Յրանսա Պահրը Սէֆիտ տօ-նանմաընըն պիրինճի ամիրալը Յուրիյէն իգրամէն երտըղըքէօշ-կինտէ զիյաֆէթ քէշիտէ օլընմըջ տըր : Ամիրալ եազմընը վէրէ-ֆիգասը իլէ մէզքիւր զիյաֆէթ-տէ հազըր պուլընմըջ վէ նիշան-լար իլէ թալթիթ օլընմըջարտըր :

—Մըսըրտան թիւրքիայա կէ-լէնլէր իշին մուգարէր օլան գա-րանթինա 24 սաաթա էնմիշ տիր :

—Մըսըր-էլ-Գահրէտէ «Սան-ճագ» իսմինտէ հաթթալըզ թիւրք ճէ պիր կազէթա նեշը օլընմայա պաշլամըջ տըր, սահիպ վէ մու-հարլիթի սապըզ օսմանը մէմու-րի Մուհամէտ Սաիպ պէյ նամ պիր զաթ օլուպ, պաշլըճա թիւր-քիանըն անվալընտան պահս իտէ-ճէք : Կէնճ թիւրքլէր կիպի Սուլ-թանըն շախսընա հագարէթ իթ-մէյէճէք իսէտէ տալգալուգլուգ տախի իտէմէյէճէկինի պէյան ի-տէյօր : Մէրգուլ մուհարըրի միւ-թէվէֆա Միտհաթ բաշանըն ֆի-րար իտէն մախտուլը Ալի Հա-տար պէյ իլէ տէֆաթլէ կէօրիւշ-միւշ օլտըղընը պէյան իտէյօր : պինապէրին՝ պու կազէթա իլէ մուհիմ սըրլար մէյտանա չըգա-ճաղընա պէքլէնիթիօր :

—Կիլիկիա կաթողիկոսը ինթի-խապ իթմէք իշին սուտուր իտէն իրատէ տալիյէ նէզարէթի թարա ֆընտան Պատրիարքարանա իհթար օլընմըջ տըր :

—Ալման վէ ինկիլիզ կազէթա-լարը Սուլթանըն անվալը զիհնի-յէսի վախիմ պիր հալտէ կէօսթէր-մէքտէ տիրլէր :

Թիւրքլէրտէ ֆագր ու գարու-րէթ նիհայէթ տէրէճէյէ վարմըջ տըր : մալիյէնին իսէ պիւսպիթիւն պօշ օլմասը, մաալլարըն վէրիլմէ-մէսի վէ ըմազանընտա եազլաշ-տըղը թիւրքլէր միյանընտա ճիտ-տի պիրխօշնուտսըղըզ իլէրի կէ-թիւրմիշ տիր : Սուլթան իսէ պու հա-լին էօնիւնիւ ալմագ իշին, հիշ պիր եէրտէն փարա պուլմայա իւ-միտի օլմատըղընտան ֆէվգէլատէ բահաթսըզ պիր վազիլէթտէ պու-լընմագտա տըր :

Կէնճ-թիւրքլէրտէ հէր նէ գա-տար ճիտտի վէ պէօյիւք պիր գուլ-վէթ պուլընմայօր իսէտէ Սուլ-թան նիհայէթ տէրէճէյէ գօր-գուտա պուլընիօր : պու զիհ-նէն պիհազուր պուլընմաընտան իլէրի կէլմէքտէ տիր :

Պունտան մատաա երլտըզ խաս-սա օրտուսընը թէշքիլ իտէն Ար-նապուլար իսէ, Ղանի պէյին գա-թիլի Սուլթան թարաֆընտան ճէ-ղալանտըրըմամըջ օլտըղընտան տօ-լարը զայէթ հիտտէթիլի պուլըն-տըզլարընտան, Սուլթան օնլարըն իւզէրինտէն տէ էմիյէթի գալ-տըրմըջ տըր վէ Արնապուլար զա-յէտ եիւզ ալմըջ, վէ տիսսիփիլինէ ապա սէմու իթիպար վէրմէտիք-լէրինտէն, պունլար պիր կիւն-եէնիշէլէր կիպի, փատիշահա-րը իսթէտիլէրի վագըթ թախթ-տան ինտիլուպ, գալտըրմալա գա-տար իլէրի կիտէլլէր տէյիւ գօր-գըլմագտա տըր :

ՏՈՒՆԻՅԵ

Թունօվա վիլայէթինտէ պուլը-նան Մանասթըրընա զիարէթի մինասիպէթի իլէ Յէլա. Բընն հազըրէթլէրի 300 ֆրանք վէրմիշ տիր : վէ քէզա 1000 ֆր. թրնօ-վա գրաաթհանէսինէ, 300 ֆր. Յուգարաբէրվէր գատընլար ճէ-միյէթինէ, 700 ֆր. շէհրին ֆու-գարալարընա, վէ 400 ֆր. «Իս-թիգալիյէթ մուհարէպէսի ճէմի-յէթի կէօնիլլիւլէրինէ» իհտա իթ-միշ տիր :

—Իսթանպուլօֆ թարաֆտար-լարը ֆրագասը իշինտէն թէշքիլ օլընմըջ տըր : միւթէտաիտ շիւ-պէլէր միւրախաալարը պու հաթ-թա Սօֆիատա թէճէմիւ իտէրէք Մ. Կրէքօֆը ըէիս նասպ ու ի-լան իթմիշլէր, պունտան պէօյիւ ֆըրգաի մէզքիւր կրէքօֆ նամը իլէ թէսմիյէ օլընմագ տըր :

—Պունտան էվլէլէթի նուսիւնիլգտէ սէհվէն՝ ալթուն պէտէլինտէ օլան պանգիսթլար զէկ. 31ինէ գատար թօք-լանընագը տէմիշ տըր : իշպու գարար 1900 սէնէսի զէկանմըրի իշին օլ-տըղընը եանի պունտան 13 ալ սօնրա մէզքիւր պանգիսթլարըն լաղվ օլմա-ղընը պէյան իտէրիլ :

ՄԻԻԹԵՆԵՎՎԻՅԵ

Ճէնուպի Աֆրիգատան վիրուտ իտէն խուսուսի թէլէկրաֆլարըն պէյանընա կէօրէ, Սթօրիպուրկ վէ Օռանթ նէհրի ճիվարընտա Հո-լանտալըլար ինկիլիզլէրէ գարշը ըսեան իտուպ, Պօնլէրլէր պիրլէշ միշլէր :

«Մ. րնինկ Բօնթ»-ըն տէրճ իթ-տիկի պիր թէլէկրաֆա պինաէն, Պօնլէրլին Լատիսմիթէ ալմըջ օլ-տըղը կիւլէրէր շու սօն կիւլէրտէ շէհրին իշէրիսինի խարապ իթմէք-տէ իմիշլէր :

Պօնլէրլին էլինտէն գուրթուլան պիր ինկիլիզլին վէրտիկի մալիւմա

թա պինայէն, Գօլէնսօ էօնիւնաէ ժէնէրալ Ժուպէրին գօմանտաը ալթընտա 15 թօրլէ 15,000 Պօ-էր ապքէրի մէվճուտ ըմըջ :

Պալտատա գատար ի շա օլընա-ճագ շըմէնտըֆէր խաթթընին իմ-թիյաղը ալմանիալը գուլմանեայա վէրիլմէսինին հափատիսի Բէթըրա-պուրկաա ֆէնա թէէսիր հուսուլա կէթիւրմիշ տիր : «Նօվօէ վրէմիս» պու մէսէլէտէն պահս իտէրէք, մէզքիւր խաթթըն ալմանիա ոէր-մայէսի վէ մուհէնտիսլէրի վասը-թասը իլէ ինշա օլընմասը Անա-տուլտա Ալմանիանըն թէէսիլինի թէմէլլէշտիլմէք վէ տըրթըրմագ օլմազընտան, Բուսիանըն օնպին-լէրճէ ապքէր թէլէթի իթմիշ օլմասը պօշա կիթմիշ օլտը տէյօր : վէ ի-լալէթէն Բուս տէվլէթի մէզքիւր խաթթըն իմթիյաղընը ալմագ ի-շին Ալմանլարա գօնգիւրանս իթ-միլի իտի, ֆագաթ շիմտի մէզ-քիւր խաթթ էլտէն կիթմիշ իսէ, պարի Բուսիա՝ Ալմէմիսթանտան կէշուպ Հինտ ովկէանուընա միւլ-հագ օլմայա վէ օլ թարաֆլարտա քիմսէնին միւտախէլէսինէ մէյտան վէրմէմէյէ շալըշմուր տէմէքտէ տիր : Մալիւմ օլտըղը իւզրէ, մէզ քիւր կազէթա՝ Բուս խարիճիյէ նէ-զարէթիլին նիմ ըսմի օրկանը տըր :

—Մ. Ամերիգանըն մէճիսի ումուլմիսի (գօնկրէ) ալաֆրանկա զէկ. 5տէ ալըլմըջ օլուպ, Ճոււ-հուրիյէթ ըէյիսի Մաք Գիլիլինին պու մինասիպէթլէ իրատ իթտի-կի նուլթըրնտան աթիտէքի նօգ-թալուր ճալիպի տըզգաթ տըր :

Բէյիս պիւտմէտէն պահս ի-տէրէք՝ «Կէշէն սէնէ տէվլէ-թին 611 միլիոն տուլար ի-րատի վէ 700 միլիոն մէսարաֆի օլ-մըջ տըր : պու սէնէ 641 միլիոն իրատ վէ 601 միլիոն մէսարիֆի. միզ պուլընմալլէ իսթիգրազ իթ-մէյէ իզթիզամըզ եօգտըր» տէտի : Թիւնալըղըն իլէրլէմէսի իշին եէնի նազլիյէ վարօրլարը եաք-տըրմագ լաղըմ օլտըղընը պէյան իթմիշ :

Մ. Մաքիլինի խարիճի բօլի-թիգատան պահս իտէրէք՝ Ալմա-նիա իլէ մինասիպաթը աօսթանէ-տէ պուլընլտըղընը սէօյլէտիքտէն սօնրա, ինկիլթէրա իլէ տախի սուրէթի սէմիմանէտէ մինասիպէթ-տէ օլտըզլարընը պէյանլէ պէրա-պէր, թրանսվասլ մուհարէպէ-սինտէն տուլար Ամերիգանըն հիշ պիր մազարալթը օլմատըղընտան պի թարաֆ գալաճաղընը սէօյլէ-միշ տիր :

Գիւպատտան պահս իտէրէք, մէզ-քիւր ատանըն հէր թարաֆընտա աաալիշ վէ սիւքիւնէթ իպգա օ-լանա տէկին իտարէի հիւքիւմէ-թին եէրլիլէրէ թէք օլընմայա-ճաղընը պէյան իթմիշ տիր :

Ֆիլիթին աաալարը իշին տախի Մ. Ամերիգանըն հիւմայէսի ալ-թընտա իսթիգալիլէթ վէրիլմէք խուսընտա օլընան թէքիլլէրէ էհէմիյէթ վերիլմէյէճէկինի պիւ-տիրմիշ տիր :

—Մ. Ամերիգանըն Պահրէ-նագրըր 18 առէտ եէնի հարպ սէ-ֆինէլէրի եաքտըրմագ թէքիլլին տէ պուլընմըջ տըր :

«ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ»

Լրագիր ազգալին, գրական եւ քա-ղաքական, կը հրատարակուի շաբաթ-մի անգամ. արտասահմանի համար տա-րիչան 10 ֆրանք : Բաժանորդադրուիլ փափաքողը գիւմն հետեոեալ հասցէին. American Hai publishing Co 209 . 23d St, New York City

ԹԱՏՐՈՆ «ԱՆԿԵԼ ՍԼԱՎՈՅ»

«Վէսէլօ» հայ թատերական խումբը այս գիշեր պիտի ներկայացնէ «Դիմի-Շին ՍէվՏԱՍՏՈՆ» տրամ գօմէտի 4 ա-րարուած : Ժինմասթիգ, ագրօպաթ եւ պալթ 0ր. Գաթիւնայի կողմէ : Վալը, (կիրակի գիշեր) Պի Կիլիլիշ ԳԱՏՈՆ» տրամ գօմէտի 4 արարուած : Ծառաշիկայ երեք. եւ հինգաթթի գիշերները մեծաւ պատրաստութեամբ եւ պէտք եղած տեսարաններով պիտի ներկայացուի հոշակաւոր ժիւլ Վէնիլի երկերէն «80 Կիլիլիշ ՏէվՐՈՆ ԱԼԵՄ» անուն թատերախաղը որ երկու երե-կայթի բաժնուճ է : Սովորական գիւն-Փափաքողը երկու երեկոյթի առ-սերը կրնան առնել :

ՄԵՏ Վ ԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՄՈՅԻՄ ՔԱՂԱՔԻ			
ՊՈՒԼՎԱՐ ԿԱՆԱԿԱՌԻԹԵՆԵՆ ԵՐԱՇԽԱՌԵԱԼ			
Ա. ՊԱՐԳԵՆԵՆ Է 300,000 ՖՐ. ՈՍԿԻ 50,000 տոմսեր հրապարակ հանուա են, որոնց 25,000ը պիտի շահին և:			
տիւեալ կերպով, 1900 տարւոյ՝			
Յունվար 4ին	1500	Թիւրք 101750	
Փետրվար 3ին	1500	» 143000	
Մարտ 6-7ին	2000	» 249400	
Ապրիլ 4-5ին	2000	» 318750	
» 25-26ին	2000	» 373800	
Մայիս 17 յուն. 7	1600	» 3352800	
4539000			

ԳԻՆԵՐՆ ԵՆ ՊԱՅԻՖՐԱՆԵՐ		Մէկ ուլլիք	
Կէս	Ֆր.	1.50	Ֆր.
»	»	2	»
»	»	2.50	»
»	»	3.50	»
»	»	3	»
»	»	3.30	»
»	»	6.60	»
»	»	15.20	»
»	»	115.20	»
»	»	57.60	»
»	»	28.80	»
»	»	14.40	»

Գինը եւ մանրամասն տեղեկութեան համար պէտք է գիւմի Սեղանաւոր Տխար ՍԱԳԻՍ ԳԱՐ. ԲԻՆԵՆԻ ԳԻՆԵՐՆԻ ՊԱՅԻՖՐԱՆԵՐԻ ԿԱՆՈՒԹԻՒՆ :

ՕՓԵԼ «ԲԼՈՎՏԻՎ»

ՊԱԼԸՔ ԲԱԶԱՐ Ն. 462 յլառնա Այս պանդուկը վերջերս մեր անօրինութեան տակ մտած ըլլալով իր առջը վիճակը բոլորովին բարեփոխուած է. յաճախորդները ըստ ամենայնի գոհ կացուցանելու համար՝ հակառակ համեստ գնեղուն, մաքրութեան մեծ հոգ ու խնամք կը տարուի : 10—8 ՅԱԿՈՒՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ